

Կ-232-21.12.2017,23.02.2018-ՖՎ-011/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ակտիվների արժեթղթավորման եւ ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-96-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) բոլոր «Հիմնադրամ» բառերը իրենց համապատասխան հոլովածներով փոխարինել «ֆոնդ» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.Սույն օրենքը կարգավորում է ակտիվների արժեթղթավորման գործընթացի եւ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման, շրջանառության եւ մարման՝ հետ կապված հարաբերությունները:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ակտիվների արժեթղթավորման հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով եւ դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե սույն օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Արժեթղթավորման ֆոնդերի իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության կարգավորման, արժեթղթավորման ֆոնդերի գործունեության դադարեցման, սնանկության, լուծարման, արժեթղթավորման ֆոնդերի կառավարիչների գործունեության, ինչպես նաև արժեթղթավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում եւ սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:»:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) հանել «պարտապան», «թողարկող», «մնացորդային արժեք», «պահառու», «արժեթղթավորման հիմնադրամ» եւ «արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ» պարբերությունները:

2) «ակտիվ» պարբերությունը «ներհոսքեր» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ արժեթուղթ, դեբիտորական պարտք)» բառերով.

3) «ակտիվներով ապահովված արժեթղթեր» պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ արժեթղթավորման ֆոնդի կողմից սույն օրենքին համապատասխան թողարկված արժեթղթեր, որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռք բերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:»:

4) «ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցներ (ակտիվների խումբ)» պարբերությունից հանել «մեկ» բառը,

5) «արժեթղթավորում» պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«արժեթղթավորում՝ գործարք կամ գործընթաց, որով արժեթղթավորման ֆոնդը ձեռք է բերում ակտիվներ կամ ստանձնում դրանց հետ կապված ռիսկեր, եւ թողարկում արժեթղթեր, որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռքբերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:»:

6) «արժեթղթավորում» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«ռիսկի ստանձնում՝ ակտիվի հետ կապված վարկային ռիսկի ստանձնումը՝ երաշխիքի տրամադրման կամ ածանցյալ գործիքի միջոցով կամ օրենքով թույլատրելի այլ միջոցներով.»»,

7) «սպասարկող» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«արժեթղթավորման ֆոնդ՝ ներդրումային ֆոնդ, որը ձեռք է բերում ակտիվներ կամ դրանց հետ կապված ռիսկեր՝ արժեթղթավորման նպատակով:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքով» բառից հետո լրացնել «, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:

Հոդված 6. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 4-15-րդ հոդվածները, 18-19-րդ հոդվածները, 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ, 29-րդ եւ 30-րդ հոդվածները, 6-8-րդ գլուխները:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «կառավարիչը» բառից հետո լրացնել «, ի լրումն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասությունների, ունի նաեւ հետեւյալ իրավասությունները» բառերը:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 17. Արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ

1. Երրորդ անձինք, բացառությամբ արժեթղթավորման ֆոնդի թողարկած արժեթղթերի սեփականատերերի եւ արժեթղթավորման ֆոնդի հետ սույն օրենքի համաձայն կնքված պայմանագրերի կողմերի, չեն կարող արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ ներկայացնել մինչեւ ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորությունների ամբողջությամբ կատարումը, եթե՝

1). ակտիվների վաճառքն արժեթղթավորման ֆոնդին կատարվել է շուկայական գնով.

2). արժեթղթավորման ֆոնդին սույն օրենքով սահմանված կարգով փոխանցվել է ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը.

3) նախաձեռնողը կամ վաճառողն իրավասու չեն փոխանցելու, գրավադրելու, փոխարինելու, հետ ստանալու, հետ գնելու կամ այլ կերպ օգտագործելու ակտիվները կամ դրանցից ստացվող միջոցները՝ առանց ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերերի համաձայնության:»:

Հոդված 9. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Դեբիտորական պարտքերի պահուստավորման պարտականությունը կրում է արժեթղթավորման գործընթացի այն մասնակիցը, որը կողմերի միջեւ կնքված պայմանագրի համաձայն կրում է ակտիվի գծով վճարների չստացման ռիսկը: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշմամբ կարող են սահմանվել պահուստավորման առանձնահատուկ պայմաններ՝ հաշվի առնելով կողմերի միջեւ կնքված պայմանագրի պայմանները:»:

Հոդված 10. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենտրոնական բանկն ակտիվների գրանցումն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա:»,

2) 9-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենտրոնական բանկը սույն հոդվածում նշված ակտիվների խմբի ռեզիստոր ստեղծելու, վարելու եւ շահագրգիռ անձանց կողմից ակտիվների խմբի ռեզիստորից տեղեկություններ տրամադրելու գործառույթները կարող է պատվիրակման պայմանագրով պատվիրակել այլ անձի:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 27.1 հոդվածով.

«Հոդված 27.1. Ռիսկի սրանձնում

1. Ներդրողների շահերի պաշտպանության կամ ֆինանսական կայունության կամ ֆինանսական շուկաների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից ելնելով Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտերով սահմանում է՝

1) ակտիվի կամ դրա հետ կապված ստանձնման ենթակա ռիսկի տեսակները.

2) չափանիշներ, որոնց բավարարող ռիսկերը կարող են ստանձնվել.

3) ստանձնվող ռիսկի հիման վրա թողարկվող արժեթղթերի նկատմամբ պահանջներ.

4) ակտիվի հետ կապված ռիսկի փոխանցման պայմանագրի պարտադիր պայմաններ:»:

Հոդված 12. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 28. Ակտիվներով ապահովված արժեթղթերը

1. Արժեթղթավորման ֆոնդը կարող է թողարկել ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով թողարկված փայերի (բաժնետոմսերի), պարտատոմսերի եւ(կամ) այլ պարտքային արժեթղթերի տեսքով:

Հոդված 13. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 4-րդ կետից հանել «մնացորդային արժեքի հիման վրա» բառերը,

2) 5-րդ կետում «մնացորդային արժեքում» բառերը փոխարինել «փայում(բաժնետոմսում)» բառերով:

Հոդված 14. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվող արժեթղթավորման ֆոնդերի նկատմամբ:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ակտիվների արժեթղթավորման եւ ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի մայիսի 26-ի ՀՕ-96-Ն օրենքում (այսուհետ՝ Օրենք) բոլոր «Հիմնադրամ» բառերը իրենց համապատասխան հոլովաձեւերով փոխարինել «ֆոնդ» բառերով՝ համապատասխան հոլովաձեւերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Սույն օրենքը կարգավորում է ակտիվների արժեթղթավորման գործընթացի եւ ակտիվներով ապահովված արժեթղթերի թողարկման, շրջանառության եւ մարման հետ կապված հարաբերությունները:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ակտիվների արժեթղթավորման հարաբերությունները կարգավորվում են «Արժեթղթերի շուկայի մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, այլ օրենքներով եւ դրանց հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով, եթե սույն օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Արժեթղթավորման ֆոնդերի իրավական կարգավիճակի, ստեղծման, գործունեության կարգավորման, արժեթղթավորման ֆոնդերի գործունեության դադարեցման, սնանկության, լուծարման, արժեթղթավորման ֆոնդերի կառավարիչների գործունեության, ինչպես նաև արժեթղթավորման գործընթացի նկատմամբ վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, իսկ դրանցով նախատեսված դեպքերում եւ սահմաններում՝ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով:»:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) հանել «պարտապան», «թողարկող», «մնացորդային արժեք», «պահառու», «արժեթղթավորման հիմնադրամ» եւ «արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ» պարբերությունները:

2) «ակտիվ» պարբերությունը «ներհոսքեր» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ արժեթուղթ, դեբիտորական պարտք)» բառերով.

3) «ակտիվներով ապահովված արժեթղթեր» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ արժեթղթավորման ֆոնդի կողմից սույն օրենքին համապատասխան թողարկված արժեթղթեր, որոնք ~~ապահովված են ակտիվների համախումբով եւ~~ որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռք բերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:»:

34) «ակտիվներով ապահովված արժեթղթերի ապահովման միջոցներ (ակտիվների խումբ)» պարբերությունից հանել «մեկ» բառը,

45) «արժեթղթավորում» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«արժեթղթավորում՝ գործարք կամ գործընթաց, որով արժեթղթավորման ֆոնդը ձեռք է բերում ակտիվներ, ~~պարտատոմս կամ այլ դեբիտորական պարտքեր, ակտիվների համախումբ~~ կամ ստանձնում դրա (դրանց) հետ կապված ռիսկեր, եւ թողարկում արժեթղթեր, որոնց գինը կամ դրանցով ստացվող եկամուտները կախված են ձեռքբերված ակտիվներից կամ ստանձնած ռիսկերից:»,

Formatte

Formatte

56) «արժեթղթավորում» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«ռիսկի ստանձնում՝ ակտիվի հետ կապված վարկային ռիսկի ստանձնումը՝ երաշխիքի տրամադրման կամ ածանցյալ գործիքի միջոցով կամ օրենքով թույլատրելի այլ միջոցներով.»

76) «սպասարկող» պարբերությունից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«արժեթղթավորման ֆոնդ՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված արժեթղթավորման ֆոնդներըումային ֆոնդ, որը ձեռք է բերում ակտիվներ կամ դրանց հետ կապված ռիսկեր՝ արժեթղթավորման նպատակով»:

Հոդված 5. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասում «օրենսգրքով» բառից հետո լրացնել «, «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերը:

Հոդված 6. Ուժը կորցրած ճանաչել օրենքի 4-~~6-րդ, 8-15~~~~16~~-րդ հոդվածները, 18-19-րդ հոդվածները, 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ, 29-րդ եւ 30-րդ հոդվածները, 6-8-րդ գլուխները:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասում «կառավարիչը» բառից հետո լրացնել «, ի լրումն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իրավասությունների, ունի նաեւ հետեւյալ իրավասությունները» բառերը:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 17. Արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ

1. Երրորդ անձինք, բացառությամբ արժեթղթավորման ֆոնդի թողարկած արժեթղթերի սեփականատերերին և ներդրողներին եւ արժեթղթավորման ֆոնդի հետ սույն օրենքի համաձայն կնքված պայմանագրերի կողմերի, չեն կարող արժեթղթավորման ֆոնդի ակտիվների նկատմամբ պահանջներ ներկայացնել մինչեւ ակտիվներով ապահովված արժեթղթերի գծով պարտավորությունների ամբողջությամբ կատարումը, եթե՝

1). ակտիվների վաճառքն արժեթղթավորման ֆոնդին կատարվել է շուկայական գնով.

2). արժեթղթավորման ֆոնդին սույն օրենքով սահմանված կարգով փոխանցվել է ակտիվների նկատմամբ սեփականության իրավունքը.

3) նախաձեռնողը կամ վաճառողն իրավասու չեն փոխանցելու, գրավադրելու, փոխարինելու, հետ ստանալու, հետ գնելու կամ այլ կերպ օգտագործելու ակտիվները կամ դրանցից ստացվող միջոցները՝ առանց ակտիվներով ապահովված արժեթղթերի սեփականատերերի համաձայնության:»:

Հոդված 9. Օրենքի 23-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Դեբիտորական պարտքերի պահուստավորման պարտականությունը կրում է արժեթղթավորման գործընթացի այն մասնակիցը, որը կողմերի միջև կնքված պայմանագրի համաձայն կրում է ակտիվի գծով վճարների չստացման ռիսկը: Ընդ որում, Կենտրոնական բանկի որոշմամբ կարող են սահմանվել պահուստավորման առանձնահատուկ պայմաններ՝ հաշվի առնելով կողմերի միջև կնքված պայմանագրի պայմանները:»:

Հոդված 10. Օրենքի 24-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենտրոնական բանկն ակտիվների գրանցումն իրականացնում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված փաստաթղթերում առկա տեղեկատվության հիման վրա:»,

2) 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կենտրոնական բանկը սույն հոդվածում նշված ակտիվների խմբի ռեգիստր ստեղծելու, վարելու եւ շահագրգիռ անձանց կողմից ակտիվների խմբի ռեգիստրից տեղեկություններ տրամադրելու գործառույթները կարող է պատվիրակման պայմանագրով պատվիրակել այլ անձի:»:

Հոդված 11. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1 հոդվածով.

«Հոդված 27.1. Ռիսկի սրանձնում

1. Ներդրողների շահերի պաշտպանության կամ ֆինանսական կայունության կամ ֆինանսական շուկաների բնականոն գործունեության ապահովման անհրաժեշտությունից ելնելով Կենտրոնական բանկը նորմատիվ իրավական ակտերով սահմանում է՝

1) ակտիվի կամ դրա հետ կապված ստանձնման ենթակա ռիսկի տեսակները.

Formatte

2) չափանիշներ, որոնց բավարարող ռիսկերը կարող են ստանձնվել.

3) ստանձնվող ռիսկի հիման վրա թողարկվող արժեթղթերի նկատմամբ պահանջներ.

4) ակտիվի հետ կապված ռիսկի փոխանցման պայմանագրի պարտադիր պայմաններ:»:

Հոդված 12. Օրենքի 28-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 28. Ակտիվներով ապահովված արժեթղթերը

1. Արժեթղթավորման ֆոնդը կարող է թողարկել ակտիվներով ապահովված արժեթղթեր՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով թողարկված փայերի (բաժնետոմսերի), մասնակցության վկայագրերի, պարտատոմսերի, ել(կամ) այլ պարտքային արժեթղթերի ել(կամ) «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով թողարկված փայերի (բաժնետոմսերի) տեսքով:

Formatte

Formatte

2. Ակտիվներով ապահովված արժեթղթերի գրանցումը, թողարկումը եւ տեղաբաշխումը, ինչպես նաեւ ռեեստրի վարումն ու պահառությունն իրականացվում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 13. Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 4-րդ կետից հանել «մնացորդային արժեքի հիման վրա» բառերը,

2) 5-րդ կետում «մնացորդային արժեքում» բառերը փոխարինել «փայում (բաժնետոմսում)-կամ մասնակցության վկայագրում» բառերով:

Հոդված 14. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է միայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ստեղծվող արժեթղթավորման ֆոնդերի նկատմամբ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<p align="center">«ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՐԺԵԹՂԹԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՔԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ</p>				
Առաջարկի հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Հիմնական զեկուցողի եզրակացությունը առաջարկի վերաբերյալ	Գլխադասային հանձնաժողովի որոշումը առաջարկի վերաբերյալ
ՀՀ կառավարություն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	«մասում» բառից հետո դնել «՝», իսկ «կատարել հետևյալ փոփոխությունները.» բառերը հանել:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարություն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	«հասկացություն» բառը փոխարինել «պարբերություն» բառով: Նույն փոփոխությունը կատարել 3-6-րդ մասերում:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մաս			
ՀՀ կառավարու թյուն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստա- նի Հանրապետու- թյան օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդվածի 5-րդ մաս	«նախադասություն» բառը փոխարինել «պարբերություն» բառով: Նույն փոփոխությունը կատարել 6-րդ մասում:	Առաջարկն ընդունվել է: Կատարվել են համապատաս- խան փոփոխու- թյուններ:	Հանձնաժողովն առաջարկությու- նն ընդունել է:
ՀՀ կառավարու թյուն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	Նախագծով «արժեթղթավորում » հասկացության մեջ թվարկվող գործիքները պետք է ներառվեն Օրենքով սահմանված «ակտիվ» հասկացության մեջ, քանի որ օրենքը վերաբերում է ակտիվների արժեթղթավորման ը:	Առաջարկն ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածը լրացվել է նոր պարբերությամբ, որով խմբագրվել է «ակտիվ» հասկացությունը, իսկ «ակտիվով ապահովված արժեթղթեր» հասկացությունի ց համապատասխ անաբար հանվել են «պարտատոմս կամ այլ դեբիտորական	Հանձնաժողովն առաջարկությու- նն ընդունել է:

			պարտքեր, ակտիվների համախումբ» բառերը:	
ՀՀ կառավարություն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	«Ակտիվներով ապահովված արժեթղթեր» հասկացությունից հանել «որոնք ապահովված են ակտիվների համախմբով և» բառերը, քանի որ այստեղ չկա առանձին ապահովություն, ինչպես առկա է ապահովված հիփոթեքային պարտատոմսերի դեպքում, և կարող է առաջացնել շփոթություն:	Առաջարկն ընդունվել է: Նախագծի 4-րդ հոդվածում «Ակտիվներով ապահովված արժեթղթեր» հասկացությունից հանվել է «որոնք ապահովված են ակտիվների համախմբով» բառերը:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարություն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ հոդված	Սահմանել «արժեթղթավորման ֆոնդ» հասկացությունը, քանի որ «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում այն սահմանված չէ:	Առաջարկն ընդունվել է, նախագծի 4-րդ հոդվածում «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքին հղում տալու փոխարեն սահմանվել է արժեթղթավորման ֆոնդի հասկացությունը:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարություն	«Ակտիվների արժեթղթավորման	Գործող օրենքի 7-րդ հոդվածը	Առաջարկն ընդունվել է:	Հանձնաժողովն առաջարկություն

թյուն	և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 7-րդ հոդված	նույնպես պետք է ուժը կորցրած ճանաչել, քանի որ արժեթղթավորման ֆոնդն այսուհետ համարվելու է ներդրումային ֆոնդի տարատեսակ, որի ընդհանուր կարգավորումն իրականացվելու է «Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքի համաձայն:	Նախագծի 7-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել նաև Օրենքի 7-րդ հոդվածը:	նն ընդունել է:
ՀՀ կառավարու թյուն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածով խմբագրվող 17-րդ հոդվածում «ներդրողների» բառը փոխարինել «արժեթղթավորման ֆոնդի թողարկած արժեթղթերի սեփականատերերի» բառերով:	Առաջարկն ընդունվել է 9-րդ Հոդվածը խմբագրվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:
ՀՀ կառավարու թյուն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում	Նախագծի 12-րդ հոդվածով լրացվող 27.1. Հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետում «ակտիվի» բառից հետո լրացնել «կամ դրա» բառերը:	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:

	փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 12-րդ հոդված			
ՀՀ կառավարու թյուն	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդված	Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող օրենքի 28-րդ հոդվածի՝ 1) 1-ին մասում «մասնակցության վկայագրերի, պարտատոմսերի, այլ պարտքային արժեթղթերի և(կամ)» բառերը հանել, իսկ «(բաժնետոմսերի)» բառից հետո լրացնել «պարտատոմսերի և(կամ) այլ պարտքային արժեթղթերի» բառերը, 2) 2-րդ մասը հանել, քանի որ դրանով նախատեսված կարգավորումները հակասում են ներկայումս գործող «Արժեթղթերի շուկայի» մասին օրենքի գործող կարգավորումների ն:	Ընդունվել է: Կատարվել են համապատաս- խան փոփոխու- թյուններ:	Հանձնաժողովն առաջարկություն նն ընդունել է:
ՀՀ	«Ակտիվների	Առաջարկվում է	Առաջարկն	Հանձնաժողովն

<p>կառավարություն</p>	<p>արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 14-րդ հոդվածի 2-րդ մաս</p>	<p>«կամ մասնակցության վկայագրում» բառերը փոխարինել «(բաժնետոմսում)» բառով: Քանի որ արժեթղթավորման ֆոնդը համարվում է ներդրումային ֆոնդի տարատեսակ, հետևաբար ներդրումային ֆոնդում (ֆոնդի ակտիվներում) փայամասնակցության գործիքը դառնում է ֆոնդի փայլը կամ բաժնետոմսը և լրացուցիչ գործիք նախատեսելու անհրաժեշտություն չկա:</p>	<p>ընդունվել է: Հոդվածները խմբագրվել են:</p>	<p>առաջարկությունն ընդունել է:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված</p>	<p>2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» պարբերությունից հանել «և արժեթղթավորման հիմնադրամը» բառերը:»:</p>	<p>Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»</p>	<p>5-րդ հոդվածից հանել «, մասնակցության վկայագրերի» և «, մասնակցության վկայագրերը» բառերը:</p>	<p>Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>	<p>Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է:</p>

	ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդված			
ՀՀ կառավարություն	«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 8-րդ հոդված	8-րդ հոդվածում «դեպքում» բառերից հետո լրացնել «բառերով» բառերով:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություն:	Հանձնաժողովն առաջարկությունն ընդունել է: